ԲԱՆԱՎԵՃ ԱՅՍԿՈՒՍՍԻԱ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ս. Տ. ՍԱՂՈՒՄՅԱՆ

Հայկական միջնադարյան ճարտարապետության և, առանձնապես, քանդակագործության ուշագրավ կոթողներից է Աղջոց Ս. Ստեփանոս վանքը։ Այն գտնվում է Գեղամա լեռների հարավահայաց լանջին, Այրարատ նահանգի Ուրծ գավառում, Քեղվա զառիթափ ձորահովտի խորունկ մի կիրճի եզրին, Գառնիից արևելք, Գեղամահովիտ գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք։ Վանքի հիմնադրումը վերագրվում է Գրիգոր Լուսավորչի ժամանակներին։ Տարածում ստացած ավանդության համաձայն, Հայաստանում ապաստանած հռիփսիմյան կույսերը և նրան համախոհ-ընկերակից Ստեփանոս քահանան, Տրդատ թագավորի հետապնդումից խույս տալով, թաքնվում են Գառնիի խոխոմք ձորերում, սակայն դեգերումների ճանապարհին, Աղջոց վանքի տեղում, մահանում է Ստեփանոս քահանան։ Նրա նշխարների վրա IV դարի սկզբին Գրիգոր Լուսավորիչը կառուցում է վկայարան և ապա վանք՝ նոր դավանանքի նահատակի և նրա բախտակից կույսերի հիշատակին անվանակոչելով Աղջոց (աղջիկների) Ս. Ստեփանոսի վանք։ Մի Հայսմավուրքում ավանդված այս պատումը առանց վերապահության օգտագործվել է հարցին անդրադարձողներ Մ. Չամչյանի[1], Ղ. Ինճիճյանի[2] կողմից. կես դար անց վանքի վիճակի և հասույթների մասին հպանցիկ ակնարկող «Ջամբռի» հեղինակը[3] չի անդրադարձել նրա պատմության ոչ մի դրվագին։ Ավելի ուշ վանքի կառուցման ավանդազրույցը կրկնել է Հ. Էփրիկյանը[4]։

Հայագետներից առաջինը, որը փորձել է հանգամանորեն ներկայացնել Աղջոց վանքը, խորագիտակ Ղ. Ալիշանն է։ Նա ձեռագիր հիշատակարանների և մատենագրության ժլատ հաղորդումներից հյուսել է վանքի պատմությունը[5]։ Սակայն քննախույզ գիտնականին ևս չի հաջողվել էապես լրացնել նախորդ հեղինակներին։ Նման վիճակն ամենից առաջ հետևանք է այն բանի, որ իրադարձություններին մոտ կանգնած, ինչպես և Զաքարյան ու Խաղբակյան նախարարական տների հետ սերտ կապեր ունեցող Կիրակոս Գանձակեցին, Վարդան Վարդապետը և Մխիթար Այրիվանեցին ոչ մի տեղեկություն չեն թողել վանքի կառուցման մասին[6], իսկ թվարկված երախտավորները չեն եղել Աղջոցում, չեն քննել նրա վիմագրերը՝ հուսալիորեն երաշխավորված եզրակացությունների հանգելու։

Աղջոց վանքը դիտական աշխարհին ներկայացնելու առաջին լուրջ փորձը կատարվել է XX դարի սկզբին։ Ռուսաստանի կայսերական հնագիտական ըն-

---

1 Մ. Չամչեան. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1784, էջ 397 (ակնարկել է, թե «յետոյ կոչեցաւ Աղջոց վանք»)։

2 Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 268—269 (ավելացնում է, թե այստեղ է թաղված նաև Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսի աչը)։

3 Սիմէօն Երևանցի. Ջամբռ. Վաղարշապատ, 1873, էջ 140—141, 281։

4 Հ. Ս. Էփրիկեան. Բնաշխարհիկ բառարան. հ. I, Վենետիկ, 1903—1905, էջ 113—114։

5 Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 352—354, 360—361։

6 Ժամանակակից պատմիչների տարակուսելի լության մասին խոսք կլինի ստորև։



Ս. Ստեփանոս եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից

կերության արշավախումբը (Վ. Մ. Միսոև, Տարագրոս, Դաղյանց) 1907 թ. ուսումնասիրել է հուշարձանախումբը, լուսանկարել այն, չափագրել և ըստ կարի ընդօրինակել արձանագրությունները։ Ժողովված նյութերը հրատարակվեց են 1916 թ., Կովկասի հնագիտությանը նվիրված ստվար հատորներից մեկում[7]։ Այնուհետև վանքի ընդհանուր պատմությամբ և խաղացած դերով համակողմանիորեն զբաղվել է Գ. Հովսեփյանը և իր դրույթներն ի մի բերել Խաղբակյաններին նվիրված ծանրակշիռ եռահատորում[8]։ Հուշարձանի քանդակների մասին առանձին հոդվածներով հանդես է եկել Լ. Զաքարյանը[9]։

---

7 Материалы по археологии Кавказа. Вып. XIII, М., 1916, с. 54—65, 237.

8 Գարեգին արքեպ. Հովսեփյան. Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ. մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 62—63. մասն երկրորդ, Երուսաղեմ, 1942, էջ 137—158, 193, 194, 196. հ. Գ. Նյու Յորք, 1942/3, էջ 9—10, 64—75։

9 Լիլիթ Զաքարյան. Աղջոց վանքի քանդակները.—«Գիտություն և տեխնիկա». 1981, № 9, էջ 26—29։ Նույնի՝ Աղջոց վանքը և նոր ուղղության զարգացումը հայ քանդակագործու-

Սույն հոդվածը մի նոր փորձ է միակ հավաստի սկզբնաղբյուրի՝ վիմագիր արձանագրությունների միջոցով ճշտելու Աղջոց վանքի գլխավոր՝ Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցման ժամանակը և որոշելու նրա արժեքը։

Նկատի ունենալով, որ ճարտարապետությունն ու քանդակագործությունը ևս շինությունների ժամանակագրության որոշման համոզիչ փաստարկներ են, հակիրճ անդրադառնանք մեզ հետաքրքրող Ս. Ստեփանոս եկեղեցու հորինվածքի սկզբունքներին ու գեղազարդման հնարանքներին։

Եկեղեցին գմբեթակիր, հատակագծում արտաքինից կանոնավոր ուղղանկյուն քառանկյան մեջ ներառված, ներսից, աբսիդին կից և արևմտյան թևի երկարակ խորանների շնորհիվ խաչաձև կառուցվածք է՝ շարված սրբատաշ, տեղական կապտերանգ բազալտով։ Գլխավոր աբսիդին կից վերին խորանների մուտքերը հանդիպակաց են, իսկ ներքինները բացվում են արևմուտքից։



Ս. Ստեփանոս եկեղեցու ներքին տեսքը (հատված)



Աղջոց վանքի հատակագիծը. կենարոնում՝ Ս. Ստեփանոս եկեղեցին

Արևմտյան խաչաթևի չորս խորանների մուտքերը դեմառդեմ են. երկրորդ հարկ են տանում որմնահեծ (կոնսոլ) 8-ական քարե աստիճաններ։ Բոլոր ութ խորանները թաղակապ են և ունեն կանոնավոր սեղաններ։ Յուրաքանչյուր խաչաթևի որմածքում բացվում են երկուական նեղ, կամարակապ, իսկ խորաններում՝ ուղղանկյուն լուսամուտներ։ Անկյուններից ձգվող սլաքաձև կամարների և նրանց միջի առագաստների հուսալի կոնստրուկցիաներն ապահովաբար կրել են ծանր թմբուկը։ Այժմ մնում են թմբուկի ստորին շարքը՝ ելունավոր շրջագոտիով, ճակատոնների թեքադիր անկյունաքիվերը և թմբուկատակ քառանկյան անկյունակների տումբաները։ Բեմաճակատի երկշար քարերի վրա ութաթև աստղաքանդակներ են՝ ներփակված գլանաձև քիվով խորանի մեջ։ Բեմագոգը գոտկող քիվի վերևով անցնում է շղթայահյուս զարդաքանդակ։ Հուշարձանի արտաքին հարդարանքը ավելի քան հարուստ է. միակ՝ արևմտյան շքամուտքը պսակված է կիսաշրջան խոշոր կամարով և գնդաձև խարիսխներով ավարտվող գլանաձև զույգ կիսասյուներով։ Ճակատակալ քտրի վրա մեծագույն արվեստով կատարված սյուժետային սրբաքանդակներ են[10]։ Մուտ-

Թյան մեջ XIII—XIV դդ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 1։ Թեև հուշարձանը «յոթը սարի ետևում» չէ (Երևանից՝ 30 կմ), սակայն նրա մասին ոչ մի ակնարկ չկա մասնագիտական նորօրյա գրականության էջերում։

10 Գ. Հովսեփյանն այս խմբաքանդակը համարել է խորհրդավոր ընթրիքի, ապա՝ վերջին դատաստանի պատկերագրությունը (Ռոշյանք կամ..., հ. Գ, էջ 65), իսկ Լ. Զաքարյանը՝ համբարձման տեսարանը։

քիչ աջ ու ձախ, ինչպես և նույն՝ արևմտյան ճակատի պատուհանի կողքերին ագուցված են հմտամշակ խաչքարեր։ Կան նաև բուսական, երկրաչափական տարաբնույթ զարդանախշեր ու պատկերաքանդակներ։ Հարավային պատին արևի օմացույցն ու Դանիելն առյուծների գրում հանրահայտ դրվագն է, իսկ հարավ-արևմտյան խորանի լուսամուտի պսակի ելուններին՝ թռչնաքանդակներ։ Արևելյան ճակատի սրանկյուն երկու որմնախորշերն ավարտվում են ճառագայթավոր կամարներով՝ շրջափակված ատամնավոր պսակներով (որպիսիք կան Խծկոնքում, Մարմաշենում, Մակարավանքում, Գեղարդում, Դադիվանքում, Դանձասարում, Դեղձուտում և այլուր)։ Կենտրոնական լուսամուտը շրջաղարդված է Անիի, Մարմաշենի հուշարձանների նմանակմամբ, իսկ նրանից վեր գոգավոր, խոշոր սկավառակ է՝ քանդակազարդված աճն ու փթթումը խորհրդանշող քառաթև վարսանդաճյուղերով, որի նմաններն ունենք Դադիվանքի գլխավոր եկեղեցու նույն հատվածում (1204 թ.), Դանձասարի տաճարի վրա (1216—1238) և այլուր։

Նման յուրահատկությամբ՝ դրսից ուղղանկյուն, ներսից ուղղանկյուն խաչաթևերով, հանդիպակաց դռներով կրկնահարկ խորաններով, խնամքով մշակված մանրահատիկ խոյակներով ու խարիսխներով զույգ կամ երեքական գլանաձև որմնասյունիկներով, շրջազարդված կլոր և ուղղաձիգ լուսամուտներով, աշխարհիկ զարդամոտիվների համակցությամբ հոգևոր շինությունները մեզանում հանդես են գալիս X—XI դդ. սահմանագլխին (Անի, Սանահին, Մարմաշեն, Ամբերդ), սակայն հուշարձանի այլ մանրամասները՝ պատկառազդու վերձիգ ծավալը, արևելյան ճակատի շրջաքանդակը, ի սկզբանե պատերի որմածքի մեջ դրված խաչքարերը[11], Դանիելի քանդակը բնորոշ են XII դարի վերջին և XIII դարին։ Թռուցիկ դիտարկումն իսկ վկայում է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք նախորդ դարերից եկող ավանդույթների և, ինչպես նկատել է Գ. Հովսեփյանը, Զաքարյանների շրջանի ճարտարապետական և քանդակագործական արվեստի սինթեզին։

Աղջոց վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցման ժամանակի հարցը լուծելու համար ամենահուսալի սկզբնաղբյուրը իր իսկ որմերի փորագիր արձանագրություններն են, որոնցով էլ առաջնորդվել են թե՛ Վ. Սիսուանը, թե՛ Գ. Հովսեփյանը։ Վ. Սիսուանը հիրավի հենվել է հուշարձանի արձանագրությունների տրվյալների վրա, սակայն նա, ինչպես և արշավախմբի մյուս անդամները, վիմագրագետներ չլինելով, վավերագրերն ընդօրինակել ու լուսանկարել են ըստ կարողության և ապա, հրատարակիչների հավաստմամբ, Մոսկվայում Քուչոսկ-Հովհաննիսյանին հանձնարարվել է վերծանել ու մեկնաբանել դրանք[12]։ Նման պայմաններում վրիպումները, բացթողումները, աղավաղումներն ու ինքնահնար միջամտությունները անխուսափելի են, որի հետևանքով Վ. Սիսուանին չի հաջողվել անթերի եզրակացության գալ, և նրա որոնումները տատանվում են XI—XIII դդ. արանքում[13]։ Այսպես, հիշատակված ժողովածուի հավելվածում տրված է ոմն Եփրեմի կողմից 1154—ՈԳ թ. վանքին Կ (60) սպիտակ տալու մասին արձանագրությունը[14]։ Պարզ է, որ 1154 թ. կարելի էր փորագրություն կատարել արդեն գոյություն ունեցող շենքի որմին։ Նման տարբերվով փաստ չի դիտվել Գ. Հովսեփյանի կողմից։ Հիշյալ նվիրագիրը գտնելու ուղղությամբ մեր պրպտումները ևս անցան ապարդյուն[15]։ Բայց կա մի այլ փաստարկ, որն ավելի վճռական է հնչում. դա եկեղեցու ներսի հարավա-

---

11 Նավոք, դրանցից միայն մեկն ունի արձանագրություն (վանքի առաջնորդ Արել վարդապետի վերաբերյալ), այն էլ՝ աւանց տարեթվի։

12 Материалы..., XIII, с. 1.

13 Նույն տեղում, էջ 85։

14 Նույն տեղում, էջ 237։ Էլ չենք խոսում 1048 թ. արձանագրության «հայտնության» մասին, որի ճշտությունը կասկածի տակ է դրել հեղինակը՝ Վ. Սիսուանը (նույն տեղում, էջ 63)։

15 Կարծում ենք այս հաղորդումը ինչ-որ շփոթի հետևանք է և ոչ մի չափով հավատ չի ներշնչում։

Ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան շքամուտքը

յին պատին Շղեանց Սարգսի նվիրագիրն է՝ «նեղ աւուրքն» Կ (60) դահեկան վճարելով խորանն ստանալու և նրանում իր ու ծնողների հիշատակին տարեկան մեկական պատարագաժամ կատարելու խոստումով։ Արձանագրության վերջի թվատառերը կարդացվել են ՈԸ[16]—1159, որով ավելի է ամրապնդվեր հուշարձանը XII դարի կեսերին կառուցված-ավարտված լինելու վարկածը։ Թեև նվիրագիրը լավ է պահպանված, սակայն թվատառերը կիսաեղծ են (ջուրն ու քամին «քերել» են ողորկ քարերը, և տառահետքերը հազիվ են նշմարվում)։ Գ. Հովսեփյանը հարցականով առաջարկում է ՈԸ (1159) սրբագրել ՈՀ (1221)՝ անհարիր համարելով XIII դարի առաջին քառորդում կառուցված շենքի վրա ավելի վաղ գրության գոյությունը[17]։ Մեր ընդօրինակությամբ չի

16 Материалы..., XIII, с. 56

17 Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., հ. Գ, էջ 67, արձ. 127։

հաստատվում ՈԸ կամ ՈՀ թվատառերի առկայությունը։ Նախ միավորի մասին. ամենայն հավանականությամբ այն Բ (2) է, քանի որ տառի ստորին մասում քարը համեմատաբար լավ է պահպանվել, մաշվածք չունի և Ը-ի ստորին ելունը պիտի մնար, որը չկա։ Միավորի առջևի տառի նկարվածքը նկատելիորեն Զ (80) է, իսկ հարյուրավորը, որն առայժմ կասկածից դուրս է՝ Ո (600)։ Այսպիսով, Շղևանց Սարգսի և միաբանության միջև գործարքը կայացել է ՈԶԲ—1233 թ. և այն ո՛չ ժամանակով, ո՛չ էլ բովանդակությամբ բնավ չի առնչվում կառուցման հետ[18]։

Աղջոց Ս. Ստեփանոս վանքի ընդհանուր պատմությունը, ինչպես ասվեց, առավել ամբողջական է Գ. Հովսեփյանի մանրազնին ուսումնասիրության մեջ։ Նա քաջագիտակ է այս առթիվ եղած մատենագրական ողջ նյութին, ուշի ուշով ընդօրինակել է հուշարձանի արձանագրությունները, ուղղել Վ. Սիսոևի բազմաթիվ սխալները, լրացրել բացթողումները, շտկել անհարթությունները և ըստ այդմ հյուսել մենաստանի պատմությունը։ Նա իր հրատարակած թվագիր 6 արձանագրություններից չորսը՝ ՈԿԱ—1212 թ. Իվանե Զաքարյանի[19], ՈԿԲ(թ)—1213 (1220) թ. Գրիգոր Խաղբակյանի[20], ՈՀ—1221 թ. Սարգիս Շղևանցի[21] նվիրագիրը և ՈԿԶ—1217 թ. Արել վարդապետի[22] շինարարական վավերագիրը համարել է կառուցմանը ժամանակակից և դրանք ելակետ է ընդունել եկեղեցու հիմնարկման ու ավարտի ժամանակահատվածը որոշելու համար։ Նա քանիցս հավաստում է, որ Ս. Ստեփանոս եկեղեցին «կառուցված է 1212—1217 թթ.»[23]։ Նույն կարծիքը վերահաստատելով, փոքր-ինչ ուշ նա գրում է. «Իվանեի և Արել վարդապետի արձանագրությունները ցույց են տալիս, որ վանքի (իմա՝ Ս. Ստեփանոս եկեղեցու—Ս. Ս.) շինությունը տևել է ոչ պակաս, քան 1212—1217 թվերը։ առաջինը սկզբնավորության, իսկ երկրորդը՝ վերջավորության ժամանակը»[24]։ Նշված տարեթվերին ավելի ուշ անդրադառնալու պայմանով նախապես նշենք, որ, անկասկած, այստեղ եղել են ավելի վաղ ժամանակվա շենքեր (ինչպես և վանք)։ Հաթաթյանները ու նրանց ստորակա-աջակից Խաղբակյան, Օրբելյան, Վաչուտյան, Մամիկոնյան ավատական տների գլխավորած ազատագրական պայքարի հաղթանակից հետո, միջնաշխարհում սկսված տնտեսական վերելքի պայմաններում, Արել վարդապետը ի հիմանց քանդել է ժամանակի պահանջին ու ճաշակին անհարիր, խարխլված շենքերը և կառուցել նոր եկեղեցի ու գավիթ։ Այդ են վկայում մատենագրական հակիրճ, թեկուզ առասպելախառն հաղորդումը, եկեղեցու որմածքի հինավուրց բեկորները, մուտքից ձախ Զաղա իշխանուհու և Գրիգոր շպետի արձանագրությունների միջնամասի հիշատակագիրը՝ Մխիթար և Սարգիս եղբայրների հոգու պաշար Խ (40) դեկանը գավթին նվիրելու և եկեղեցու մարտիրոսոգնների ու եղբայրների (միաբանության) խոստումը՝ նրանց պատարաք սահմանելու մասին[25]։

Միաբանության և վանքի գոյության հնագույն վկայագիրը, մինչև այժմ անհայտ, պարսպի արևմտակողմի գերեզմանոցի պարզունակ խաչքարերից մեկի վրա է։ Գողգոթա—հող—երկիր սիմվոլից ծլարձակած խաչաքանդակի չորս բոլորքում մանրատառով փորագրված է. ԿԱՄԱԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ / ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ Է. Ս[ՈՒՐ]Բ ՈՒԽՏԻՆ / ՀԱՒՐՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱ / ԲԱՆ ԵՂ-

---

18 Թվատառերի ենթադրյալ փոփոխության հնարավոր տարբերակը մեկն է՝ Ի Թ ՈԶԲ—1233-ի փոխարեն Ի ԹՈԻ ՁԲ—1253, որը ոչնչով չի փոխի իրերի վիճակը։

19 Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., հ. Գ, էջ 64, արձ. 120։

20 Նույն տեղում, էջ 65—66, արձ. 123։

21 Նույն տեղում, էջ 67, արձ. 127։

22 Նույն տեղում, էջ 65, արձ. 122։

23 Նույն տեղում, մասն առաջին, էջ 82։

24 Նույն տեղում, մասն երկրորդ, էջ 141։

25 Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., հ. Գ, էջ 69, արձ. 130։ Ամենայն հավանականությամբ արձանագրությունը պետք է գրված լինի 1230-ական թթ.։

ԲԱՐՅՍ, ՈՐ ԳՐԵՑ / ԱՔ ՇԱՏԼՈՅՍԻՆ. ՄԻԱԲԱ / ՆՈՒԹԻՒՆ Ի / ՏԱՐԻՆ .Բ. / ԱՒՐ ԺԱՄ / ԱՆԽԱՓԱՆ ԵՒ / ՇԱՏԼՈՅՍՆ Ե[Ղ]Կ / ԵՂԵՑԻՈՅՍ / ԱՐԴԻՒՆՔ ԱՐ / ԱՐ ԵՒ ՈՐ ՈՉ / ԱՌՆԷ ԶԺԱՄՆ՝ ԴԱՏ / ԵՍՑԻ ՅԱ[ՍՏՈՒԾՈ]Յ։ ՈՒՉ (1197)։ Ուրեմն 1197 թ. կար և գործում էր վանքը, որին ծառայություն ցուցաբերած Շատլոյսին սուրբ ուխտի (Աղջոց վանքի) առաջնորդը և միաբանները խոստացել են երկու օր պատարագ մատուցել[26]։

Այժմ փորձենք պարզել, թե երբ է կառուցվել խնդրո առարկա հուշարձանը. հիրավի՞ 1212—1217 թթ., ինչպես կարծել է Գ. Հովսեփյանը· թե՞ XII դարում, ինչպես պնդում է Վ. Սիսուանը (զանց ենք առնում XI դ. թյուրիմացությունը)։



Շինարարական արձանագրությունը

Նախորդ հետազոտողներին չի հաջողվել գտնից ստույգ ընթերցել Իվանե Զաքարյանի 1212 թ., Աբել վարդապետի 1217 թ., Գրիգոր Խաղբակյանի ու Զազա իշխանուհու արձանագրությունները։ Մենք ընդօրինակել ենք վանքի որմերի և նրա մերձակայքի արձանագրությունների ամենաշնչին տառահետքերն ու կցագրերը[27] և, որ կարևոր է, հայտնաբերել Արելի ընդարձակ տարեգրության պակասող հատվածը, որոնց նորովի վերծանությունները մեզ բերել են ընդունված թվագրությունները վերանայելու հետևության։

Սկսենք թվագիր ունեցող հնագույն արձանագրությունից[28]։ Այն գլխավոր՝ Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատին է, Դանիելն առյուծների դրսում

---

26 Շատլոյսի ԵԿԵՂԵՑԻՈՅՍ... ԱՐԴԻՒՆՔ ԱՐԱՐ արտահայտությունից հայտնի չէ. նա հո՞ղ, այգի՞, գո՞ւյք, սպա՞սք, այլ ի՞նչք է նվիրել, նյութական աշակցությո՞ւն է ցուցաբերել, թե՞ մասնակցել է շինարարական գործերին։ Եվ, որ կարևոր է, ոչ մի կերպ հնարավոր չէ պարզել խոսքը նոր, թե հին սուրբ ուխտին է վերաբերում, որով կպարզվեր 1197-ին սկսվա՞ծ էր նոր եկեղեցու կառուցումը, թե ոչ։ Շատլոյսը, հավանաբար, Գառնի գյուղի արևելյան եզրի գերեզմանոցում թաղված նույնանուն անձն է՝ մահացած 1225 թ.։

27 Նման հնարավորություն ստեղծվեց հուշարձանախմբի ջերմեռանդ պահապան Վ. Սաֆարյանի հնարագիտությամբ պատրաստված աստիճաններով վիմագրերին բավարար չափով մոտենալու շնորհիվ։

28 Գ. Հովսեփյանի հրատարակած արձանագրություններից թվագրված են 6-ը, հինը՝ 1212, նորը՝ 1471 թվականից, իսկ մեր հավաքածուի թվական ունեցողները 20-ն են, հները՝ 1197, վերջինը՝ 1610 թվականից։

կոմպոզիցիայից անմիջապես աջ, մարդահասակից 3—4 անգամ բարձր։ Երկու երկար և մեկ կարճ տողերով կիսաեղծ ու դժվարընթեռնելի նվիրագիրը հետևյալն է.

Ի ԹՈՒԻ[Ն] ՈԿԱ (1212), [Ե]Մ՝ ԱԹԱԳԱԿ ԻՒԱՆԵ, ՏՎԻ ՁՎԱՆԱՑ ՓՈՐ[ԱԿ]Ն ԵՒ ՁՎԱՐԴԱՆԱՑ ՓՈՍՆ ԸՍՏ[Ե]ՓԱՆՈՍԻ[Ն], Վ[ԱՍ]Ն ԵՐ[Կ]ԱՐ ԿԵՆԱՑ ՈՐԴՈՅ ԻՄՈՅ ԱՒԱԳ

II ԻՆ, ԱՐԴ, ԵԹԷ ՈՔ Ի ՄԵԵԱՑ ԿԱՄ Ի ՓՈՔՈՒՆՑ, [Ա]ՁԱՏԱՑ ԿԱՄ Ի ՇԻՆԱԿԱՆԱՑ [Հ]ԱԿԱՌԱԿ[ԱՑ] ԵՒ ՁՀՈՂՆ ԽԼԵԼ ՁԱՆԱՑ Ի

III ՎԱՆԱՅՍ, ԿԱԵՆԻ ԵՒ ՅՈՒԴԱՒ ՄԱՄՆԱԿԻՑ ԵՂԻ[ՑԻ Ե]Ի ՅՃԺԸ (318) ՀԱ[Յ]ՐԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎԵՍՅԻ,

Շինարարական արձանագրության նորահայտ կտորներից մեկը

Սիսոև—Քուչուկ-Հովհաննիսյան վերծանությունն այնքան է հեռու բնագրից, որ հարկ չենք համարում անդրադառնալ դրան[29]։ Տարընթերցումներն ու բացթողումները գդալի են նաև Գ. Հովսեփյանի մոտ[30]։ Այսպես, առաջին տողում Իվանեի անվան վերջում նա հարցականով ավելացրել է Ս դիմորոշ հոդ, որպիսին չկա տեղում, իսկ տվի ՁՎանաց փորակն եւ ՁՎարդանաց փոսն ԸՍտեփանոսին վասն հատվածը կարդացել է տվի ՁՎանաց փորն եւ ՁՎարդ... համբողջացող տեքստով, որն, ըստ էության, նվիրագրի հիմնական ու կարևոր մասն է և, ըստ այդմ, ինչպես Վանաց փորակը, այնպես էլ Վարդանաց փոսը դիտվելու են իբրև տեղանուններ, որոնց (հողակտորները) Իվանե աթաբեկը նվիրել է Ս. Ստեփանոսին՝ իր որդի Ավագի արևշատության համար։ Երկրորդ տողի հակառակ կայ-ի փոխարեն առաջարկում ենք հակառակայ ընթերցումը (ինչպես և կա իրականում), որով իմաստային փոփոխություն տեղի չի ունենում և պահպանվում է խոռվածքի ձևը (հակառակայ բառն օգտագործված է

---

29 Материалы..., XIII, с. 58.

30 Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., հ. Գ, էջ 64։

նույն նվիրագրի «շարունակությունը» կազմող Գրիգորի արձանագրության մեջ ևս)։ Անկախ այս ամենից, քննվող վավերագիրը բացարձակապես ոչ մի չափով չի առնչվում շինարարությանը, այդ մասին չկա որևէ ակնարկ, հետևաբար այն չի կարող հուշարձանի կառուցման, այն էլ՝ հիմնադրման կոված ծառայել։ Նվիրագիրը փորագրվել է 1212 թ. արդեն գոյություն ունեցող պատին։ այն էլ՝ այդքան բարձր։ Մնում է ընդունել, որ 1212 թ. կառուցված-ավարտված էր Ս. Ստեփանոս եկեղեցին և նրա վրա արձանագրություններ էին փորագրվում։ Մտահոգիչ է մի հարց ևս. արձանագրության մեջ վարչական բարձր և ցածր աստիճանավորների, ազատների (ֆեոդալական դասի ընտրանիի) հետ բանադրական սպառնալիք է տրվում նաև շինականներին, եթե նրանք փորձեն վանքից խլել տրված հողամասերը։ Արդ, ի՞նչ հետևության կարելի է հանգել լբռնացվող իրավունքներով օժտված Իվանե աթաբեկի մտավախությունից։ Հավանաբար Վանաց փորակը և Վարդանաց փոսը կամ եղել են հասարակական օգտագործման ենթակա հողեր, որոնք Իվանեն բռնությամբ անվարձահատույց նվիրաբերել է վանքին և կամ դա պետք է դիտել եկեղեցական հողատիրության դեմ ծառացող ընդվզումի կանխարգելիչ միջամտություն[31]։

Ժամանակագրական առումով հաջորդ արձանագրությունը վերաբերում է Գրիգոր Խաղբակյանին։ Այն բարավորի խմբաքանդակի եզրերում ու նրա տակ է։ Ցածից հազիվ նշմարվող արձանագրության սկզբնամասը Գ. Հովսեփյանը կարդացել է ոչ հստակ և կարծել, որ այն «գրված է 1213 կամ 1220 թվին»։ Այնուհետև նշել է, որ Գրիգոր Խաղբակյանն ու իր ամուսին Զազան «անմասն չմնացին և օժանդակ հանդիսացան եկեղեցու պայծառության, գուցե և շինության» գործում և ապա ավելացրել. «Սորանց անվան հետ կապված արձանագրությունները մասամբ փչացած են, և մենք լիովին գաղափար չենք կազմում նրանց մասնակցության մասին»[32]։ Ու թեև Գրիգորին ու Զազային առնչվող արձանագրությունները մեր վերծանությամբ հիմնականում ամբողջանում են, սակայն դարձյալ լիովին գաղափար չենք կազմում նրանց մասնակցության մասին, քանի որ այդ առթիվ որոշակի ոչինչ չի ասված։ Այսուհանդերձ, բարավորի արձանագրության հրատարակիչների վրիպումները շտկելուց հետո այն ստանում է հետևյալ տեսքը. Ի ՈԿՋ (1217) ԵՍ՝ ԳՐ / ԻԳՈՐ, ՈՐԴԻ ԽԱՂ-ԲԱԿ / Ա ԱԻԳՆԵՑԻ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԲԱՋՈՒՄ ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ / ՍՈ-ՐԱՅ ԷՏՈՒՆ ԻՆՁ ՁԱՒԱԳ ԽՈՐԱՆՆ .Ե. ՇԱԲ ԵՒ ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ ՀԱ / ՆԱՊԱՋ ԷԹԷ ՈՔ ԽԱՓԱՆԵ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՁՈՎԵ(Ա)Լ ԵՂԻՅԻ։

Գ. Հովսեփյանը արձանագրության սկիզբը կարդացել է Թ.ՈԿ (Բ Թէ Թ?) ևս ԳՐ(իգոր?) որդի Աղբակա, մինչդեռ մեր շտկումը՝ Ի ՈԿՋ ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ԽԱՂԲԱԿԱ լիովին նույնական է քարի վրա եղածի հետ։ Սակայն, որ զըլխավորն է, այս դեպքում ևս ոչ մի խոսք, հեռավոր ակնարկ իսկ չկա շինարարության վերաբերյալ, դա պարզապես նվիրագիր է, որում Գրիգորը հայտնում է, որ ինքը 1217 թ. բազում արդեամբք օգնել է եկեղեցուն (բնավ ոչ կառուցմանը), և սպասավորները սահմանել են ավագ խորանում հինգշաբթի և շաբաթ օրերը պատարագել հանապազ։ Այսպիսով, Աղշոց վանքում Զաքարյանների ու Խաղբակյանների գործունեությանն աղերսվող բերված արձանագրությունները բացահայտորեն կապ չունեն եկեղեցու կառուցման հետ։ Հետևաբար նրանք չէ, որ կառուցել կամ նպաստավորել են կառուցմանը[33]։

---

31 Այս իրողությունը դիտվում է ոչ միայն Աղշոց վանքի վիմագրերում և այն, անշուշտ, արժանի է հատուկ մանրակրկիտ քննության։

32 Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., մասն II, էջ 142։

33 Կարծում ենք հենց դրանով պիտի բացատրել Վարդան Վարդապետի և Կիրակոս Գանձակեցու լռությունը Զաքարյանների ու Գրիգորի կուլտուր-շինարարական գործունեության վերաբերյալ Աղշոցում այն դեպքում, երբ նրանք մանրակրկիտ ու վստահելի տեղեկություններ են հաղորդում 1222 թ. Գանձակի մոտ զիշդներից հայ-վրացական զորքերի պարտության, «զարիական և և զքաշ», «արք քաշք և անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն տաճկաց» Գրիգոր

ժամանակագրության առումով «սկզբնաղբյուրի» դեր է վերապահվել նաև Սարգիս Շղեանցի նվիրատվական արձանագրությանը, որը, ինչպես պարզեցինք վերևում, ոչ թե 1159 (Վ. Սիսոև) կամ 1221 (Գ. Հովսեփյան) թվակիր է, այլ 1233 և ոչ մի չափով չի կարող վարկածը լուծելու կռվան ծառայել։

Այժմ անդրադառնանք ամենահիմնական՝ շինարարական միակ արձանագրությանը, որը փորագրված է եկեղեցու հարավային պատի վերին ձախ (արևմտյան) անկյունում, Դանիելի քանդակից վերև, պատի հանդիսավոր հատվածում։ Այն պատառիկները, ինչ հաջողվել է վերծանել Վ. Սիսոևին (Քուչուկ-Հովհաննիսյանին) և Գ. Հովսեփյանին, հազիվ թե կարող են թեկուզ հեռավոր գաղափար տալ շնորհագրի անգամ մոտավոր բովանդակության մասին։ Նրա 2—5-րդ տողերի նորահայտ երկու քարերի տվյալները լիովին փոխում են իրերի վիճակը և օգնում պարզելու եկեղեցու կառուցման ժամանակը[34]։ Այդ երկարաշունչ տարեգրությունը մի բացառիկ ու մոնումենտալ հուշարձան է միջնադարի տնտեսական կյանքի, հասարակական ուժերի միավորման, կուլտուր-մշակութային օջախի ստեղծման ու շինության արժեքի որոշման իմաստով։ Մանրուկրկիտ րծախնդրությամբ ընդօրինակել և վերծանել ենք այդ ընդարձակ արձանագրությունը, որը ներկայացնում ենք ստորև.

I ...ՍՊԱՐ]ԱՊԵՏՈՒԹԵ[ԱՆ] ՀԱՈՑ ԵՒ ՎՐԱ[Յ] ՁԱՔ[ԱՐԵՒ],...

II ԹՎԻ[Ն] ՈԿՁ (1217), ՅԻՇԽԱՆՈՒԹ[ԵԱՆ]Ս ԻՒԱՆԵՒ Ե[Ի] Ի ՀԱՅ-ՐԱՅՊԵՏՈՒԹԵ[ԱՆ]Ս Տ[Է]Ր ԴԱՒԹԻ, ԵՍ՝ ԱԲԵԼ,

III ՎԱՐԴԱՅՊԵՏԱՑ [ՎԱՐԴԱՊԵՏ], ԱՌԱՋՆՈՐԴ ԵԿԵ[Ղ]ԵՑՈՅՍ, ՄԻԱՅ-ԲԱՆՈՒԹ[ԵԱ]ՄԲ ԵՂԲԱՐՅՍ ՇԻՆ[Ե]ՑԱՔ ՁԵԿ-

IV ԵՂԵՑԻՍ ՄԵԾԱՒ ԱՇԽԱՏՈՒԹ[ԵԱՄ]Բ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ՁԳԻՐ ՅԻ-ՇԱՏԱԿԻ ԱՒԳՆՈՂԱՑ ԵԿԵՂ-

V ԵՑՈՅՍ. :Զ: ԱՒՐ ԺԱՄ ՍԱՐԳՍԻ, ՈՐ Ի ԳԱՌՆԻ ՁԸՆՁԱՆՆ ԵՐԵՏ ՈՒ ՁԵԳԻՆ, :Գ: ԱՒՐ ԴԱՒԹԻ ԵՒ ԳՐԻԳՈՐ-

VI ԵՍ[35], .[Գ]. ԱՒՐ Հ[ՈԳ]ԵԴԵՂԻՆ [ԵՒ] ՍԱՐԳՍԻ[Ն] .Ա. ԱՒՐ Ա-ԲԻՍՈՂՈՄԻՆ, .Բ. ԱՒՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, .Ա. ԱՒՐ [Հ]ԱՅ[Ր]-

VII ԱԳՆԴԻՆ, :Բ: ԼՈՅՍՈՒՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԿԵՆԱԿՑԻՆ, :Բ: ԿԱՐԱՊԷՏԻՆ ԵՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ, .Ա. ԱՒՐ [ՈՐԴ]-

VIII ՈՅ ԱԴՈՋԻՆ, :Ա: ԱՇՈՏԱՅ, .Բ. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՁՐՔԱՇԵԱՆՑ., :Դ: ԲԱԽՏԿԱՆ ՈՒ ԹԱՄԿԱՆ՝ [ՈՐ Ի]

IX ՆՈՐԱԳԵՂՈՅ ՄԵԾ ԱՅԳ[Ի]Ն ՏՈՒԻՆ, Ա: ՔՎԵՐՆ, ՈՐ ՁԱՅԳԻՆ ԵՐԵՏ ՄԵՐՁ Ի ԲԱԽՏԿԱՆ Ե[Ի]

X :Բ: ԳԷՈՐԳԱ ԵՒ ՅԱԿՈԲԱ, ՈՐ ՁԳԻՆ ԱՅԳԻՆ ՏՈՒԻՆ Ի ՆՈՐԱԳԵՂ, :Բ: ՎԱՐԴԱՆԱ, :Բ: ՄՈՒՐԿԱՆ[Ն]

XI [Ե]ԻՍ ՎԱՐԴԱՆԱ, :Բ: ԱՊԸՍՏԱՄԲԻՆ ԵՒ ՆԱՁԿԱՆՆ, :Զ: ՅՈՐՈՅ ԱՆՈՒՆ, :Բ: ԽՈՐԱՍՈՒՆ՝ Զ[ՆՈՐԱ]ՏՈՒՆ-

XII [Կ] ԱՅԳԻՆ ԷՐԵՏ. ՀԱՍՏԱՏ[ԵՑԱՔ Կ]ԱՄԱՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ. ԷԹԷ ՈՔ Մ[ԵՋ Հ]ԱԿԱՌԱԿԻ ԳՐԵԼ ԱՅՍ ԿԱՄ Յ-

---

Խաղբակյանի տանջամահության ու նրա եղբորորդի Պապաքի սպանության մասին։ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 142—143։ Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց. Երևան, 1964, էջ 204—206։

34 Այդ երեսակալ երկու խոշոր քարերը 1905—1906 թթ. դեպքերի հետևանքով շպրտվել են վանքամերձ լանջը և աննկատ մնացել որոնող աչքից։ Դրանք գտնվել են ճարտարապետ Վ. Խաչատրյանի և հնագետ Ֆ. Մուրադյանի որոնումների շնորհիվ։

35 Դավիթն ու Գրիգորեսը իրենց ծնողների հիշատակին խաչքար են կանգնեցրել վանքի գերեզմանոցում։

XIII ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԿԱՄ Ի ՍՊԱՍԱՈՐԱՑ ԷԿԵՂԵՑՈՅՍ Ա[Մ]ԵՆՈՅՆ ՄԵՂԱՅՆ ԻՆՔՆ ՏԱՅԷ Պ[Ա]-

XIV ՏԱՍԽԱՆ Ի ԱՌԱՋԻ Ք[ՐԻՍՏՈՍ]Ի ՅԱՐԷՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ:ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ ՍԿՍԱՆԻՆ ԱՌՆԵԼ ԵԻ ԱՅԼ ՄԻՈՒ-

XV Մ ՄԵՔ ԻՇԽԵՍՅԵՆ ԱՌՆԵԼ ՄԻՆՉ ԱՅՍ ԱԻԱՐՏԻ:ՉՄԽԻԹԱՐ ԳՐԻՉ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՅԷՔ[36]։

Թեև այս արձանագրությունը մեզ է հասել մեծապես քայքայված և դժվարությամբ է վերականգնվում ու ամբողջանում, սակայն անընթեռնելի մասերը հիմնականում վերականգնվում և լրացվում են բավարար հավաստիությամբ։ Առաջին տողի սկիզբը (որն ավելի ձախից է սկսված) ծածկված է եկեղեցուց հետո կառուցված գավթի պատով, իսկ վերջը հիմնովին եղծված է և լոկ մի քանի տառահետքեր են նշմարվում։ Այսուհանդերձ պարզվում է, որ այն սկսվել է հայ-վրացական գլխավոր զորահրամանատար (սպարապետութեան Եայոց և Վրաց) Զաքարեի անվամբ և ապա շարունակվել է տարածքի իրավական սեփականատեր Իվանե աթաբեկի անունով։ Գ. Հովսեփյանին չի հաջողվել ցածից ընթերցել այս չափազանց կարևոր տողը և բառերի փոխարեն՝ դրվել է կետերի շարան, իսկ Վ. Սիսոևի մոտ այն դարձել է բնադրի հետ ոչ մի կապ չունեցող (Ողոr)մաթեամբն Աստուծոյ... ինքնահնար բառերը[37]։ Արձանագրության II—III տողերի ես Աբել վարդայպետաց առաջնորդ եկեղեցոյս միայբանութեամբ եղբարցս շինեցաf զեկեղեցիս կապակցությունն անորոշ ու խրթին է, չի ընկալվում Աբելը վարդապետների՞ առաջնորդն է, թե եկեղեցու։ Շարահյուսական ու իմաստային անհարթությունը թերևս կարելի է շտկել միանգամայն տրամաբանական ու սպասելի Ես՝ Աբել, վարդայպետաց վարդապետ, առաջնորդ եկեղեցոյս, միայբանութեամբ եղբարցս շինեցաf զեկեղեցիս իմաստավոր բառաշարքով։ Արձանագրության V—XI տողերի վերջին 4—5 տառերը, միջնամասի առանձին հատվածները հողմնահարվել են այն աստիճան, որ ստեպ-ստեպ անորոշ գծահետքեր են նշմարվում կամ դրանք էլ չկան, որի հետևանքով մի քանի անձնանուններ ու դարձվածներ մնում են թեական։ Այսպես, երկմտելի են VII—VIII տողերի որդոյ Աղոզին, XI-ում՝ եւս կապակցությունները։ Վերջինս ստույգ լինելու դեպքում պետք է կարծել, որ երկու պատարագաժամ ստացած Վարդանը պատարագ է ստացել նաև Մարկոսի հետ, իսկ նույն տողի :Ջ: յոrn յանուն հատվածն ընկալում ենք որպես նախորդ նվիրատու Ապստամբին ու նազկանը երկու պատարագից զատ 6 ժամ ևս սահմանելու վճիռ։ IX տողի Քվերն համարում ենք անձնանուն, այս բառով հարաբարդություններ կան միջնադարում (Քույրխաթուն, Քույրածայր), թեև խոսքը կարող է վերաբերել Բախտիկի քրոջը, որը եղբոր այգուն մերձակա իր բաժին այգին է ընծայել վանքին։

Այժմ դառնանք եկեղեցու կառուցման խնդրին։ Ինչպես վերևում ասվեց, ոչ մի ապացույց չունենք այդ փաստը XI, XII դարերին վերագրելու։ Եթե անհամոզեցուցիչ է նաև 1212—1217 թթ. սահմանազատելու փորձը, ապա ինչպե՞ս վարվել հենց իր՝ շինարարական արձանագրության պարզ ու հստակ ՈԿՉ—1217 թվագրության հետ։ Այն, որ կառուցումը տեղի է ունեցել Զաքարեի կենդանության օրոք (1213 թ. առաջ), ինքնին կասկածի տակ է դնում 1217 թ. հավաստիությունը։ Սակայն հարցը դրանով չի սահմանափակվում, արձանագրության նորահայտ մասում պարզեպարզ ասված է, որ եկեղեցու կառուցումը տեղի է ունեցել Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԷՐ ԴԱՒԹԻ։ Իսկ ո՞վ է Դավիթը, ե՞րբ է ապրել նա, ինչո՞վ է առնչվել շինարարությանը։ Կիրակոս

[36] Նախորդ հրատարակիչներն ունեն միայն առաջին չորս տողերի մի մասը՝ կցկտուր և չիմաստավորված։ Գ. Հովսեփյանի աչքից անգամ սպրդել է, որ արձանագրության մի բեկորիկ ստել է Հնագիտական ընկերության հաշվետվության մեջ (էջ 58, № 65)՝ քմահաճ խմբագրումներով ու լրացումներով։

37 Материалы..., XIII, с. 58, № 65.

Գանձակեցին բարեխղճորեն շարադրում է XIII դարի սկզբին կաթողիկոսական գահի շուրջը ծագած հակառակության ու գժտության մանրամասները[38]։ Ըստ նրա հաղորդման, Հովհաննես Սսեցին (Մեծաբարձ) 1203—1221 թթ. հայրապետական գահն զբաղեցնում է Հռոմկլայում, իսկ Անանիա Սեբաստացին 1204 թ. իրեն հակաթոռ է հռչակում Սեբաստիայում և նույն տարում Դավիթ Գ Արքայակաղնեցին իբրև աթոռակից նստում է Աղթամարում։ Վերջինս մի կարճ միջոց Լևոն թագավորի կողմից ճանաչվում է փաստական կաթողիկոս։ Ի դեպ, Դավիթը ոչ միայն սերտ կապերի մեջ էր Լևոնի, այլ նաև Զաքարյանների հետ։ Մ. Օրմանյանի հաշվումներով Դավիթ կաթողիկոսը մահացել է 1206 թ.[39], իսկ դեպքերին ականջալուր Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ նրա և Լևոն թագավորի պատվիրակը մասնակցել է 1208 թ. Լոռիի ժողովին, ասել է, թե այդ տարում Դավիթը դեռ կենդանի էր։ Անշուշտ, ոչ մի կերպ համոզիչ չէր լինի կարծել, թե նշանավոր հոգևոր գործիչ Աբել վարդապետը չի իմացել իր հայրապետի՝ այդ տարիներին փաստական կաթողիկոս Դավթի մահը և արձանագրության մեջ թյուրիմացաբար է վկայակոչել նրան։ Լիովին ավելորդ ենք համարում այս առումով խոսել Զաքարեի մահվան մասին։

Այս ամենը, կարծում ենք, բավարար հիմքեր են տալիս այսպիսի հետևության. քանի որ Աղջոց վանքի Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է Հայաստանի քաղաքական-վարչական և հոգևոր իշխանության բարձրագույն ներկայացուցիչների՝ հայ-վրացական զորահրամանատար Զաքարեի սպարապետության ժամանակ, այսինքն՝ 1213 թ. առաջ, տեր Դավթի հայրապետության շրջանում, այսինքն՝ մինչև 1208 թ., մեզ մնում է ընդունել, որ կառուցողական-շինարարական արձանագրության ՈԿԶ—1217 թվի տասնավորում թույլ է տրվել վրիպում (նման դեպքեր կան վիմագրերում և ձեռագրերում) և այն պետք է սրբագրել միակ հավանական տարբերակով՝ ՈՇԶ—1207։

Այսպիսով, Աղջոց Ս. Ստեփանոս վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել-ավարտվել է 1207 թ., Զաքարե Զաքարյանի սպարապետության (մահացած 1213 թ.), Դավիթ Գ Արքայակաղնեցու կաթողիկոսության (մահացած 1208 թ.), Իվանե Զաքարյանի իշխանության, վարդապետաց վարդապետ Աբելի առաջնորդության ժամանակ, այն էլ ոչ թե մեծատոհմիկ մեկենասների (Զաքարյանների ու Խաղբակյանների), այլ հասարակական միջոցներով։

Իսկ այժմ փորձենք պարզել, թե ինչ է արժեցել այդ եկեղեցին։ Համապատասխան տվյալներ չլինելու հետևանքով ցայժմ մեզանում նման փորձ չի կատարվել՝ որքան էլ ցանկալի ու անհրաժեշտ է եղել դա։ Խնդրի լուծման այս յուրօրինակ ու եզակի փորձի հիմքը շինարարական արձանագրության՝ բոլոր դեպքերում կասկածի չենթարկվող տվյալներն են։ Քաջ հայտնի է, որ միջնադարում պատարագաժամեր էին հատկացվում նվիրատվությունների, ընծաների դիմաց՝ դրամական արտահայտությամբ։ Այս մասին բազմաթիվ վկայություններ կան հուշարձանների որմերի արձանագրություններում։ Զնչին կասկածն իսկ փարատելու համար բերենք մի բացորոշ օրինակ։ Գառնի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու մոտի որմնախաչի հյուսիսային պատի երկարաշունչ արձանագրության առաջին մասում թվարկված են միաբանած անձինք, տրված նվերները և սահմանված ժամերը, իսկ վերջին նվիրատուի՝ Խաչատուրի որդի Սմբատի կապգրերով հարուստ գեղագիր հիշատակագրի վերջնամասում բաց տեղ է թողնված նվիրատվության գումարը և համապատասխանաբար պատարագաժամը հաշվելուց հետո լրացնելու համար։ Սակայն այդ տրվյալներն այդպես էլ չեն լրացվել, և պարտավորագիրը մնացել է թերի. ՄԻԱՅԲԱՆԵՑԱՑ ՍԼՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ, Ե/ՏՈՒ... ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ Ի ՏԱՐԻ/Ն... ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ։

---

38 Կիրակոս Գանձակեցի, էջ 149, 168, 171։

39 Մ. Օրմանյան. Հայոց եկեղեցի. Կոստանդնուպոլիս, 1911, էջ 255։

Իսկ որքա՞ն արժեր մեկ պատարագաժամը կամ մեկ պատարագի համար որքա՞ն դրամ էր պահանջվում։ Այս հարցը հույժ կարևորություն ունի տընտեսական պատմության համար և այն գրավել է բծախնդիր գիտնական Թ. Ավդալբեգյանի ուշադրությունը։ Նա մանրակրկիտ վերլուծելով վիմական ու մատենագրական տվյալները, պարզել է, որ X—XIV դդ. Հայաստանում «շրջանառության մեջ եղած ոսկի փողը դահեկանն է, դեկանը, կարմիր դահեկանը կամ ոսկի «կարմիրը»[40]։ Այնուհետև նյութի համադրությամբ նա ճշտել է, որ «ուշ միջնադարում ժամ-պատարագների միջին սակագինը եղել է 20-ից 25 դահեկան»[41], որը բաղկացած է 200—250 դրամից, իսկ մեկ դրամը կշռում է 4,5 գրամ։ Ն. Ադոնցը ավելի ուշ, Գ. Հովսեփյանի «Հոգևոր կենտրոններ և Գլաձորի բարձր դպրոցը» ուսումնասիրության «Քննական տեղեկագրում» կողմնակիորեն անդրադառնալով այս խնդիրներին, ընդունում է Թ. Ավդալբեգյանի կարծիքը և, թերևս, ունենալով լրացուցիչ տվյալներ, մեկ պատարագաժամի սակագինը համարում է 20 դահեկանը[42]։

Վիմագրերի քննությունից պարզվում է, որ այս կարգը քարացած չի եղել. թերևս դրամի (և ապրանքի, կայքի) արժեքի փոփոխության հետ փոփոխվել է նաև պատարագաժամի սակագինը, որը մերթ 20 դահեկան, մերթ ավել կամ պակաս կարող էր լինել։ Այս նկատառումով ուշագրավ ենք համարում Ջրվեժ գյուղից 2 կմ արևելք, խոցեր դարմանող և վերքեր ապաքինող Քոսաղբյուրի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի մեջ ներսից խցկած հուշարձանապատկան երկու երեսապատ քարերի քառատող անտիպ արձանագրությունը. ԵՍ՝ ԱՌՔԱՅ, ՄԻԱ[Բ]ԱՆԵՑԱՅ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՅ / ԾՆԻՍ ԵՒ ՏՈՒՒ։ ԺԸ։ ԴԵԿԱՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ ԻՆՉ Յ[Ա]ՅՏՆՈՒԹԵ[ԱՆ] ՃՐԱԳԼ / ՈՒՑԻՆ ։Ա։ ՊԱՏԱՐԱԳ, ՈՎ ԽԱ[ՓԱ]ՆԷ ԴԱՏ[Ի Ի ՏԻԱՌՆԷ]։ Ուրեմն այս դեպքում ԺԸ (18) դեկանի դիմաց տրվել է Ա (1) պատարագ։ Աղջոց վանքում, ինչպես պարզվում է հրատարակված ու անտիպ արձանագրություններից, կարգն առավելապես հաստատուն է՝ մեկ ժամն արժե 20 դահեկան, երկուսը՝ 40, երեքը՝ 60 և այլն։ Բերենք իրողությունը կրկին հաստատող մի քանի օրինակներ XIII դարի կեսերից՝ նույն հաստատությունից։ Եկեղեցու հարավային պատի արևմտյան փոքր պատուհանից ցած Քրիստոսի աղախին Գոհարի արձանագրությանը կցված նվիրագրերում ասված է. ա) ԿԱՄԱԻՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԵՍ ՄԽԻ-Բ·Ա[Բ] ՍՊԱՍ / ԱՒՈՐ ՀԱՅՐ ԵՐԷՄԻԱՒ ՏՎԻ ։Ի։ Դ[Ա]Հ[ԵԿԱՆ] ԵՒ ԱՌՒ ԱՒՐ ՄԻ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՐԻՆ։ բ) ԵՍ ՏԻՐԱՏՈՒՐ ՏՎԻ / ։Ի։ ԴԵԿԱՆ ԵՒ ԱՌՒ ՄԻ ԺԱՄ։ Իսկ գավթի հարավային պատին, ներսից, բարձրուստ արձանագրված է. ԵՍ՝ ՎԱՐԴԱՆ, ԷՏՈՒ ։Խ։ Դ[Ա]Հ[Ե]ԿԱՆ Ի Ս[ՈՒՐ]Բ ՍՏԵՓ / [ԱՆ]ՈՍԻՍ ԵՒ ՄԻԱ-ԲԱՆՔՍ ԳՐԷՑԻՆ ԻՆՉ Ի Տ / ԱՐ[Ի]Ն ·Բ. ԱՒՐ ԺԱՄ, Ա· ԻՆՉ, ·Ա· ԻՄ ԾՆՈՂ- / ԱՑՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐ [ՀՆ]Ի[Ն Յ]Ա[ՍՏՈՒԾՈ]Յ։ Այս նվիրագրերը ևս հույս են ներշնչում, որ շինարարական արձանագրության մեջ հատկացված յուրաքանչյուր պատարագի դիմաց պետք է տրված լինի 20 դահեկան, ըստ որի և եկեղեցու կառուցման արժեքը որոշելու համար կատարում ենք հաշվարկներ։ Արձանագրության տվյալներով մեկենասներն ստացել են հետևյալ պատարագաժամերը. Սարգիսը՝ Զ (6) ժամ (Գառնիում տված հնձանի և այգու դիմաց), Դավիթն ու Գրիգորեսը՝ Գ (3), Հոգեդեղն ու Սարգիսը՝ Գ (3), Աբիսողոմը՝ Ա (1), Հայրապետը՝ Բ (2), Հայրագունդը՝ Ա (1), Լուսատը և իր կենակիցը՝ Բ (2), Կարապետը և Մարգարեն՝ Բ (2), Ադոզը՝ Ա (1), Աշոտը՝ Ա (1), Ստեփաննոս Ջրքաշեանցը՝ Բ (2), Բախտիկն ու Թամիկը (որ Նորագեղո մեծ այգին տուին)՝ Դ (4), Քուլրը (որ այգին երեսի մերձ ի Բախտական)՝ Ա (1), Գևորգն

---

40 Թ ա դ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն. Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար.—«Տեղեկագիր» ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, № 2, էջ 47—48։

41 Նույն տեղում, էջ 64։

42 Տե՛ս Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Նշվ. աշխ., հ. Գ, էջ իբ—իգ։

ու Յակոբը (որ դգին այգին տուին ի Նորագեղ)՝ Բ (2), Վարգանը՝ Բ (2), Մուրիկն ու Վարգանը՝ Բ (2), Ապստամբն ու Նազիկը՝ Բ (2), յորո յանուն՝ Զ (6), Խորասուն (զոր Նորատունկ այգին էրեստ)՝ Բ (2)։ Այսպիսով շինարարությունը նպաստավորող 25 անձինք ստացել են 45 պատարագաժամ։ Եվ քանի որ մեկ պատարագաժամի սակագինը 20 դահեկան է (1 դահեկանը՝ 10 դրամ, 20-ը՝ 200), հետևաբար 45 ժամ պատարագների հետադարձ հաշվարկով ստացվում է 900 դահեկան (45×20=900) կամ 9000 դրամ (900×10=9000)։ Այսպիսով, թվաբանական պարզ հաշվարկը վկայում է, որ Աղջոց վանքի Ս. Ստեփանոս Եկեղեցու կառուցման ամբողջ ծախսը կազմել է 4 (չորս) կգ 50 (հիսուն) գ ոսկի (900.4,5=4,05)։ Պատկերն ամբողջացնելու միտումով տանք եկեղեցու չափերը. հատակագծում այն (դրսից) 9,85×8,32 մ է, այսինքն՝ գրավում է 82 քմ մակերես, իսկ վերձիգ ծավալը հաշվում ենք 17 մ, քանի որ պահպանված մինչև թմբուկատակ գոտին 9 մ է, իսկ թեքադիր վեղարով հոլովված թմբուկը մոտավորապես պետք է ունենա 8 մ ձգվածություն՝ ինչը յուրահատուկ է նույն դարի հուշարձաններին։ Այսպիսով 9,85×8,32×17 չափի եկեղեցու կառուցման «նախահաշվային գումարը» 1207 թ. կազմել է 900 (ինը հարյուր) դահեկան կամ 4 կգ 50 գ ոսկի։ Ավելորդ չենք համարում հիշել, որ Շիրակացու ժամանակ (VII դար) մեկ դահեկան ոսկին հաշվվել է 4,53 գրամ[43], որի համեմատ կառուցման արժեքը կկազմեր 4,077 կգ (900.4,53=4,077), իսկ նորագույն հետազոտողների հավաստիացմամբ XIII դարում այն կշռել է 4,26 գ[44], որպիսի հաշվով 900 դահեկանը կլինի 3,83 կգ (900.4,26=3,83)։ Ինչպես տեսնում ենք, տարբերությունն զգալի չէ, իսկ գումարի հարաբերակցությունը պարզելու համար բերենք մի քանի օրինակներ. Վանական Վարդապետին Գագ ամրոցում 1236 թ. թաթարական գերությունից փրկագնել են 80 դահեկանով[45], այսինքն՝ 360 գրամ ոսկով, իսկ մեծահարուստ վաճառական Ումեկ Մանաղկերտցին, ինչպես վկայված է Գոշավանքի արձանագրություններից մեկում, 1242—1250 թթ. 40 հազար կարմիր դուկատով (նույնն է ոսկի դահեկանի հետ), այսինքն՝ 18 կգ ոսկով (40000.4,5=18,0) Ավագ Զաքարյանից գնել է Նոր Գետիկը և վանքապատկան գյուղերն ու կառուցվածքները[46]։ 1283 թ., երբ ժամանակները «դառն» էին «եւ ոսկին թանգ», նույն Ումեկի որդի Ճարը ԴՌ (4000) կարմիր դուկատով (1,8 կգ ոսկով) գնում է Հովս գյուղը «իւր ամեն սահմանաւքն» և այն նվիրում է Գետկա Ս. Աստվածածին եկեղեցուն[47]։ Նման օրինակներ կարելի է էլի մատնանշել, բայց դրա կարիքը չկա և ինքնին պարզ է, որ Աղջոցի եկեղեցու կառուցման վրա ծախսվել է պատկառելի դրամագլուխ և այն կարող է հլակետ հանդիսանալ այլ հուշարձանների հավանական արժեքը, դրանով նաև՝ ինչ-որ չափով երկրի տնտեսական հզորությունը որոշելու համար։

Նկատի ունենալով խնդրի կարևորությունը, մենք հարկադրված մտնում ենք առաջին հայացքից անկարևոր թվացող այլ մանրամասների մեջ ևս։ Այսպես, երկմտությունը փարատելու նպատակով ասենք, որ հաշվարկներ կատարելիս ղանց ենք առել թվագիր թե անթվագիր այն նվիրատվությունները (և պատարագաժամերը), որոնք, կարծում ենք, կապ չունեն եկեղեցու կառուցման հետ, որպիսին համարում ենք նաև Զաքարյաններին ու Խաղբակյաններին վերաբերողները։ Ինչ մնում է եկեղեցու ներսի Սարդիս Շղեանցի և Ռստակեսի կողմից խորաններ գնելու նվիրագրերին, ապա դրանք հետագա ժամանակի

---

43 Տե՛ս Հակոբ Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, Երևան, 1960, էջ 246—248։

44 Տե՛ս Խ. Ա. Մուշեղյան. Դրամական շրջանառությունը Հայաստանում. Երևան, 1983, էջ 225։

45 Կիրակոս Գանձակեցի, էջ 252։

46 Դիվան հայ վիմագրության. պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հռ. Մ. Ջանփոլադյան. Երևան, 1977, էջ 71—72։

47 Նույն տեղում, էջ 71, արձ. 140ա։

են և կառուցածը գնելու հարցերն են լուսաբանում[48]։ Բացառություն չի կազմում նաև հարավային պատի ծայրարևելյան եզրի արձանագրությունը, ըստ որի Պատրոնիկը և իր մայր Խունդիան «գնեցաք շինուած սորա», և սպասավորները երկու ժամ պատարագ են հաստատել (խոսքը այս դեպքում ևս վերաբերում է շինվածը գնելուն)։

Մի հարց ևս. կառուցողական արձանագրության միաբանութեամբ եղբարցս շինեցաք զեկեղեցիս մեծաւ աշխատութեամբ հատվածից կարելի՞ է արդյոք կռահել, թե միաբանության անդամները ևս նյութական մասնակցություն են ցուցաբերել շինարարական աշխատանքներին և այս դեպքում մեր հաշվարկներն ու ենթադրությունները կկորցնեն գիտական հավաստիությունը։ Կարծում ենք դրա անմիջական շարունակությունը՝ եւ հաստատեցաք զզիր յիշատակի ուգնողաց եկեղեցոյս բացահայտում է, որ անկախ այն բանից, թե նվիրատուները միաբանության անդամներ կամ այլք են, միևնույն է, բոլորը թվարկված են հիշատակագրվողների ցանկի մեջ։ Մնացյալ մեծաքանակ նվիրատվությունները կատարվել են ավելի ուշ, հոգու փրկության ակնկալիքով, իբրև հատուցում միաբանության անդամների, գրիչների, արվեստագետների, սպասավորների, ասպնջական այցելուների ծախքերի։ Վանական հաստատությունների նմանօրինակ եկամուտները գոյանում էին ունևորների ու ժողովրդի նվիրատվությամբ՝ թելադրված ազգապահպանման հարատևող մղումով և չսառչող հայրենասիրությամբ։

Մեզ մնում է ավելացնել, որ, համաձայն Զաքարիա Քանաքեռցու վկայության, Աղջոց վանքն ավերվել է 1679 թ. հունիսի 4-ի հզոր երկրաշարժից, երբ «...երկիրն Արարատեան առհասարակ դողայր և երերիւր... եկեալ շարժս այս ի կողմանս Գառնոյ՝ և փլան ամենայն շինուածք և գեղեցկայարկ բնակութիւնք, և վանորայք, և եկեղեցիք» ու ավերվածների թվում առաջինը հիշատակվում է Աղջոց վանքը[49]։ Երկրաշարժերից հետո վանքը ինչ-որ չափով կարկատվել-նորոգվել է և շարունակել իր նվաստ գոյությունը։ Երկրորդ ավերիչ հարվածը տրվել է 1905—1906 թթ., երբ հայ-թաթարական ընդհարումների հետևանքով քանդվել և նրա գործունեությունը իսպառ դադարել է։

Վերը շարադրվածից հետևում է.

1. Աղջոց վանքի հիմնադրության, գործունեության, ճարտարապետության, ավերման հարցերով հիմնավորապես չեն զբաղվել ո՛չ միջնադարի պատմիչներն ու գրիչները և ո՛չ էլ նոր ժամանակների հետազոտողները։

2. Նրա որմերի արձանագրությունները շատ թե քիչ հնարավորություն են ընձեռում պարզելու մի շարք էական հարցեր, որոնց գիտական հրատարակումը անհետաձգելի կարևորություն է։

3. IV դարի շինությունները քանդվել են XII—XIII դդ. սահմանագլխում և 1207 թ. ավարտվել է վանքի գլխավոր եկեղեցու կառուցումը։ XI, XII դդ. նրա կառուցման վերսիան ընդունելի չենք համարում։

4. Եկեղեցու անմիջական կառուցմանը մասնակցությ-ուն չեն ունեցել ո՛չ Զաքարյանները և ո՛չ էլ Խաղբակյանները, որի պատճառով էլ ժամանակակից պատմիչները հարցը լռության են մատնում։

5. Աղջոց վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել է Զաքարեի իշխանության, Իվանեի տիրապետության և Դավիթ կաթողիկոսի ժամանակ, վարդապետաց վարդապետ Արելի առաջնորդությամբ, հասարակական միջոցներով։

6. Եկեղեցու կառուցման արժեքը կազմել է 900 դահեկան կամ ավելի քան 4 կգ. ոսկի, ներկա դրամական հարաբերությամբ՝ մոտ 350 հազար ռուբլի։

---

48 Եկեղեցիների խորանները կառուցումից հետո դնելու և հատուցում ստանալու կարգը դիտարկվել է Հ. Օրբելու կողմից 1921 թ. (Н. А. Орбели. Избранные труды. Ереван, 1963 (О двух терминах в надписях Ани), с. 477—481)։ Այս իրողությունը նոր է հուսալի փաստերով վերահաստատել են Ս. Ա. Ավագյանը և Հռ. Ջանփոլադյանը (Դիվան. պրակ VI, էջ 12)։

49 Զաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն. Վաղարշապատ, 1870, հ. II, էջ 104։

К ВОПРОСУ О СТРОИТЕЛЬСТВЕ ОДНОГО ИСТОРИЧЕСКОГО ПАМЯТНИКА

С. Т. САГУМЯН

Резюме

Расположенный к востоку от села Гарни монастырь Ахчоц является выдающимся памятником армянской архитектуры и скульптуры. К сожалению,он изучен недостаточно. Историки М. Чамчян, Х. Инчичян, О. Эприкян, Г. Алишан, В. Сысоев и даже Г. Овсепян обращались к памятнику лишь в том или ином аспекте, архитекторы же полностью предали его забвению. Наше исследование основывается на эпиграфических надписях монастырского комплекса.

По преданию, монастырь основан в начале IV в. Григором Лусаворичем на мощах священника Степаноса, изгнанного из Византии вместе со святыми мученицами. Впоследствии он был разрушен турками-сельджуками. Согласно единственной строительной надписи, был перестроен в 1207 г. при армяно-грузинском военачальнике Закаре (умер в 1213 г.), при патриархе Давиде Аркаякахнеци (по нашему мнению, умер не ранее 1208 г.), атабеке Иване, главе епархии вардапете Абеле. Учитывая это, предлагаем в строительной надписи дату 1217 читать 1207. Версию о строительстве монастыря в XI—XII вв. считаем неприемлемой. То, что комплекс построен при Закарянах и Хахбакянах, недоказуемо. Выясняется, что главная церковь этого культурно-просветительного центра была возведена на общественные средства; «сметная» сумма строительства церкви (поверхность 80 м², высота 17 м) составила 900 золотых, или более 4 кг золота.